# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 123

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ համայնքի ավագանին **որոշում է՝**

հաստատել համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 3-ի № 17 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2016 թվականի նոյեմբերի 28-ի N70-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N104 և սեպտեմբերի 26-ի N111 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու մասին:
4. Հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման նպատակով այն ուղղակի վաճառքով օտարելու մասին:
6. Քաղաքացու կողմից համայնքային սեփականություն հանդիսացող գույքը գնելու նպատակով վարձակալած գույքի նկատմամբ պայմանագիր կնքելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 12 և 18 փողոցների ասֆալտապատված հատվածի ավազակոպճային բարեկարգման մասին:
8. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ հաճախող երեխայի ծնողին ծնողական վճարից ազատելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի բնակիչ Կոմիտաս Վաչագանի Հայրապետյանին և Հմայակ Գրիգորի Վարդանյանին դրամական օգնություն տրամադրելու մասին:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

**ՈՐՈՇՈՒՄ**

«03» նոյեմբերի 2017 թվականի No124-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի N70-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2016 թվականի նոյեմբերի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 2017 թվականի բյուջեի հաստատման մասին» N70-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ համաձայն հավելվածի:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՁՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի No124-Ն ՈՐՈՇՄԱՆ

Կ.Տ

1. Հատված 2-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

1.1.1. օրենսդիր և գործադիր մարմիններ

<<65590.0>> թիվը փոխարինել <<67790.0>> թվով

4.5.1 Ճանապարհային տրոնսպորտ

<<38500.0>> թիվը փոխարինել <<44500.0>> թվով

5.1.1 Աղբահանում

<<14266.0>> թիվը փոխարինել <<12766.0>> թվով

6.3.1 Ջրամատակարարում

<<12000.0>> թիվը փոխարինել <<0.0>> թվով

6.4.1 Փողոցային լուսավորություն

<<16000.0>> թիվը փոխարինել <<22000.0>> թվով

8.2.7 Հուշարձանների և մշակույթային արժեքների վերականգնում և պահպանում

<<1500.0>> թիվը փոխարինել <<800.0>> թվով

2.Հատված 3-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ

4111 հոդվածի <<42300.0>> թիվը փոխարինել <<45450.0>> թվով

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ

4239 հոդվածի <<8966.0>> թիվը փոխարինել <<6766.0>> թվով

Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում

4252 հոդվածի <<950.0>> թիվը փոխարինել <<0.0>> թվով

Շենքերի և շինությունների շինարարություն

5112 հոդվածի <<40800.0>> թիվը փոխարինել <<37500.0>> թվով

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում

5113 հոդվածի <<70700.0>> թիվը փոխարինել <<73200.0>> թվով

Աճեցվող ակտիվներ

5131 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<800.0>> թվով

3.Հատված 6-ի՝ Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման

1.1.1. օրենսդիր և գործադիր մարմիններ

4111 հոդվածի <<42300.0>> թիվը փոխարինել <<45450.0>> թվով

4252 հոդվածի <<950.0>> թիվը փոխարինել <<0.0>> թվով

5113 հոդվածի <<1500.0>> թիվը փոխարինել <<700.0>> թվով

5131 հոդվածի <<0.0>> թիվը փոխարինել <<800.0>> թվով

4.5.1 Ճանապարհային տրոնսպորտ

5112 հոդվածի <<18500.0>> թիվը փոխարինել <<24500.0>> թվով

5.1.1 Աղբահանում

4239 հոդվածի <<1766.0>> թիվը փոխարինել <<266.0>> թվով

6.3.1 Ջրամատակարարում

5112 հոդվածի <<9300.0>> թիվը փոխարինել <<0.0>> թվով

5113 հոդվածի <<2700.0>> թիվը փոխարինել <<0.0>> թվով

6.4.1 Փողոցային լուսավորություն

5113 հոդվածի <<1100.0>> թիվը փոխարինել <<17000.0>> թվով

8.2.7 Հուշարձանների և մշակույթային արժեքների վերականգնում և պահպանում

4239 հոդվածի <<700.0>> թիվը փոխարինել <<0.0>> թվով

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 125

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N104 ԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N111 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջերով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի ավագանու 2017 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի՝ համայնքային սեփականություն համարվող գույքն աճուրդային կարգով օտարելու և մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին» N104 և սեպտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի՝ համայնքային սեփականություն համարվող գույքն աճուրդային կարգով օտարելու և մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելու մասին» N111 որոշումների վերնագրերում և որոշման 1. կետում «համայնքային սեփականություն» բառերից հետո լրացնել «և Հայաստանի Հանրապետության սեփականություն» բառերը:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ագիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

### ՈՐՈՇՈՒՄ
«03» նոյեմբերի 2017 թվականի No 126

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 17-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 30-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի N119 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող թիվ 07-029-0208-0003 ծածկագրի տակ գտնվող 0.62 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0.1764հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել արդյունաբերական, ընդերքօգտագործման այլ արտադրական նշանակության հողերի:
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող Արա Աղագոլի Նազարյանի սեփականություն հանդիսացող թիվ 07-029-0012-0090 ծածկագրի տակ գտնվող 0.04614 հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատարածքի, քանի որ նրա վրա կառուցապատված է հասարակական կառուցապատման շինություն:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 127

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին 32)-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի թիվ 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝ համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող /կադաստրային ծածկագիր 07-029-0022-0094/ 0.06147հա բնակավայրերի նշանակության հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն և հատակագծում կատարել սխալի ուղղում, այն քաղաքացու սեփականությունից փոխանցելով համայնքի սեփականություն:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միհր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 128

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 2,3,4 և 5-րդ ենթակետերի պահանջներով և հիմք ընդունելով ընդլայնվող հողամասի սեփականատիրոջ դիմումը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Թույլատրել Զովունի համայնքի ղեկավարին Զովունի համայնքի վարչական տարածքում գտնվող՝ օտարվող /կադաստրային ծածկագիր 07-029-0022-0094/ 0.06147հա համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքի եղանակով, ամբողջ կադաստրային արժեքով ընդլայնման նպատակով օտարել հարակից ընդլայնվող /կադաստրային ծածկագիր 07-029-0022-0032/ 0.1հա բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման հողամասը, համասեփականատերեր Սեյրան Հայրապետյանին և Անահիտ Խաչատրյանին քանի որ նշված ընդլայնվող հողամասը շուրջ 60 տոկոսով պարփակված է օտարվող հողամասին և տեղանքի ռելեֆից և դիրքից, քանի որ հնարավոր է այնտեղ մուտք գործել միայն ընդլայնվող հողամասից և այն հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել:

| | | |
|---|---|---|
| Կողմ 7 | Դեմ 0 | Ձեռնպահ 0 |

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Մհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 129

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԳՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 627-րդ հոդվածի 1-ին մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21)-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Մանուկ Վրույրի Սիմոնյանի կողմից վարձակալվող համայնքային սեփականության հանդիսացող թիվ 07-029-0023-0004 ծածկագրի բնակավայրերի նշանակության այլ (0.2937 հա մակերեսով) հողամասի նկատմամբ կնքել պայմանագիր գույքը կադաստրային արժեքով գնելու պայմանով՝ 1քմ 4524 (չորս հազար հինգ հարյուր քսան չորս) դրամով, որը կազմում է՝ 13286988 (տասներեք միլիոն երկու հարյուր ութանասուն վեց հազար ինը հարյուր ութանասուն ութ) դրամ:

2.Վարձակալած հողատարածքը կհամարվի վարձակալի սեփականությունը կադաստրային արժեքը (այդ թվում վարձավճարի ձևով) ամբողջությամբ վճարելու պահից սկսած:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 130

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 12 ԵՎ 18 ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՎԱԾ ՀԱՏՎԱԾԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9)-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին ***որոշում է***.

Կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Զովունի համայնքի 12 և 18 փողոցների չասֆալտապատված հատվածի ավազակոպճային բարեկարգման աշխատանքներ:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Մհեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 131

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՅԻ ԾՆՈՂԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎՃԱՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի պահանջներով և հաշվի առնելով «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տնօրենի 2017 թվականի հոկտեմբերի 31-ի գրությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

«Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի սան Սամվել Հովհաննեսի Արշակյանին ազատել համայնքային ենթակայության «Երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց նախատեսված փոխհատուցման ամենամսյա վճարից, հիմք ընդունելով ընտանիքի սոցիալական պայմանները և նրա գերազանց առաջադիմությունը:

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Զովունի համայնքի 1 փողոց 133, Հեռ (+374224) 6 00 47, Կոդ 03301313, E-mail zovuni.kotayq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» նոյեմբերի 2017 թվականի No 132

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՎՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՉԱԳԱՆԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԵՎ ՀՄԱՅԱԿ ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հաշվի առնելով Կոմիտաս Վաչագանի Հայրապետյանի և Հմայակ Գրիգորի Վարդանյանի դիմումները՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Տրամադրել դրամական օգնություն հետևյալ չափով՝

1. Կոմիտաս Վաչագանի Հայրապետյան 50000/հիսուն հազար/դրամ
2. Հմայակ Գրիգորի Վարդանյան 50000/հիսուն հազար/դրամ

Կողմ 7 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ազիզ Ավդալյան
Գոռ Հայրապետյան
Արմեն Բարսեղյան
Գարիկ Սիրականյան
Հարություն Պետրոսյան
Գրիգոր Բաղդասարյան
Միեր Սիմոնյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎՐՈՒՅՐ ՍԻՄՈՆՅԱՆ